Արձանագրություն N 3

ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 23/16 ծածկագրով «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ենթակայանի շրջանցիկ 110 կՎ օդային անջատիչի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի Հայտերի բացման

ք. Երևան 2 նոյեմբերի 2016թ. ժ. 10:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Ղոսալմյանը |
| | Ա. Չոբանյանը |
| | Ս. Հակոբջանյանը |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ա. Պետրոսյանը |

Գնումների պլանով հաստատաված գումարը կազմում է 3 500 000 ՀՀ դրամ:

Նիստի օրակարգը

1.ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 23/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին:

2. Հրավեր ներկայացրած մասնակցի գրաված տեղի և մասնակցից համաձայն հրավերի պահանջվող փոստաթղթերի մասին:

3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ենթակայանի շրջանցիկ 110 կՎ օդային անջատիչի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հարց 1.ԵՐՋԷԿ-ՊԸԱՇՁԲ 23/16 ծածկագրով ներկայացրած հայտերի մասին՝

1.1. Հայտ է ներկայացրել մեկ կազմակերպություն՝

- «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ – (հասցեն՝ ք. Երևան, Արցախի 4-րդ նրբ, տ 6),

1.2. « Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ն հայտը ներկայացրել է փակ ծրարի մեջ, ծրարի վրա, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի, գրված է Պատվիրատուի անվանումը, հայտերի ներկայացման հասցեն, ընթացակարգի ծածկագիրը, «Չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը, հայտը ներկայացնողի անվանումը, հասցեն:

1.3. «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված են հրավերով նախատեսված բոլոր հավելվածները, Տուժանքի մասին համաձայնությունը և վճարման պահանջագիրը:

1.4. Համաձայն հրավերի ներկայացվել է հրավերի փաստաթղթերի մեկ բնօրինակ, մեկ պատճեն:

1.5. Հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ի գնային առաջարկը հետևյալն է՝ 3 982 680 (երեք միլիոն ինը հարյուր ութսուներկու հազար վեց հարյուր ութսուն) ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն:

Հարց 2. Հրավեր ներկայացրած հայտերի և մասնակիցների զբաղված տեղերի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

2.1. Ներկայացված հայտի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվել «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ն:

2.2 Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝

- Սույն նիստին հաջորդող աշխատանքային օրը ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՝ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ հարցումը:
- Սույն նիստի հաջորդ օրը www.gnumner.am կայքում հրապարակել հայտի բացման նիստի արձանագրությունը:
- Համաձայն ՀՀ կառավարության 2015 թ-ի հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշմանը կից հավելվածի (գնման գործընթացի կարգի) 44-րդ կետի 5-րդ ենթակետի բ ) պարբերության ծանուցել առաջին տեղ զբաղված մասնակիցին՝ «Հիդրոէլեկտրամոնտաժ» ՓԲԸ-ին այն մասին, որ առաջարկված գնի նվազեցման վերաբերյալ բանակցությունները տեղի կունենա սույն թվականի նոյեմբերի 4-ին ժամը 10:00-ին ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում:

Հարց 3. «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ենթակայանի շրջանցիկ 110 կՎ օդային անջատիչի վերանորոգման աշխատանքների աշխատանքների ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի մասին:

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հանձնարարել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Պետրոսյանին՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ենթակայանի շրջանցիկ 110 կՎ օդային անջատիչի վերանորոգման աշխատանքների աշխատանքների

ձեռքբերման նպատակով ստեղծված գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի նոյեմբերի 4-ին ժամը 10:00-ին ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի

Անդամներ՝ Ա. Ղուկասյան

Ա. Չոբանյան

Ս. Հակոբջանյան

Քարտուղար՝ Ա. Պետրոսյան